Հայտարարություն

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի Նախադպրոցական և Տարրական կրթության և մեթոդիկա մասնագիտությունների կրթական ծրագրերի դասախոսական անձնակազմի՝ ՏՀՏ նկարների թվայնացման, խմբագրման, վեկտորային գրաֆիկայից կարողությունների և էլեկտրոնային (թվային) գրադարանի ստեղծման նպատակով վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստումների իրականացման խորհրդատուի ընտրության մրցույթի

<< 20 >> հուլիսի 2018թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, այսուհետ՝ ՀՊՄՀ, «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացնում է «Նախադպրոցական և տարական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակը ՀՊՄՀ-ում ժամանակակից կրթական մարտահրավերներին համապատասխան նորարարական գործնական ու մեթոդական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստումն է նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է ՀՊՄՀ-ի Նախադպրոցական և տարրական կրթության ու մեթոդիկայի մասնագիտությունների կրթական ծրագրերի դասախոսական անձնակազմի ՏՀՏ նկարների թվայնացման, խմբագրման, վեկտորային գրաֆիկայից կարողությունների զարգացման, էլեկտրոնային (թվային) գրադարանի ստեղծման նպատակով վերապատրաստման մոդուլների մշակում և վերապատրաստման կազմակերպում: Ծրագրի իրականացման հաջողության գրավականը մեծապես պայմանավորված է վերապատրաստման իրականացման հետ, որը և իր տեղն է գտել ծրագրի գործողությունների շարքում:
Խորհրդատուն աշխատանքները կիրականացնի երկու փուլով. 1-ին փուլ՝ 1 ամիս և 2-րդ՝ 3 ամիս տևողությամբ՝ աշխատանքները կմեկնարկվեն օգոստոս ամսին:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

Ծառայությունների մատուցումը նախատեսվում է իրականացնել 1 անհատ խորհրդատուի ներգրավմամբ, ով հաշվետու ժամանակահատվածում կիրականացնի ներքոնշյալ աշխատանքները:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

- Հիմնվելով միջազգային առաջատար փորձի վրա՝ նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժության և մեթոդիկայի մասնագիտությունների ոլորտում մշակել օրինակելի վերապատրաստման մոդուլներ ուսումնական պատկերների,

գրաֆիկների վերաբերյալ Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC և նմանատիպ այլ ծրագրերով, որոնք կանդրադառնան հետևյալ հարցերին.

  - մատչելի ձևով ներկայացնել նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություններին առնչվող գրաֆիկական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, մեթոդաբանությունը ու վերջինիս ընտրության սկզբունքները,
  - հանգամանալից ներկայացնել պատկերների ստեղծման համակարգչային գրաֆիկայի մեթոդները՝ համահունչ ընտրված մեթոդաբանությանը,
  - յուրաքանչյուր դասընթացի համար ներառել ուսուցման արդի միջոցներ, գրականության ցանկ և այլ տեղեկատվական աղբյուրներ, որոնք անդրադառնում են պատկերների ստեղծման համակարգչային գրաֆիկայի կիրառման ժամանակակից մեթոդաբանությանը,
  - ներկայացնել մուլտիմեդիոն, պատկերների ստեղծման համակարգչային գրաֆիկայի միջոցների կիրառման առանձնահատկությունները, մեթոդներն ու ձևերը նախադպրոցական, տարրական կրթության համակարգերում:
- մշակել և վերապատրաստման գործընթացում ներառել պատկերների ստեղծման համակարգչային գրաֆիկայի աշխատանքների ուսումնառության վերջնարդյունքների ապահովման համար նախատեսված ընթացիկ և ամփոփիչ գնահատման ձևեր և մեթոդներ: Ամփոփիչ գնահատման արդյունքում պլանավորել ստանալու անհատական պորտֆեյլո՝ բոլոր վերապատրստվողների մասով ընդհանուր առմամբ առնվազն 100 նկարներով:
- Մշակված մոդուլը մինչև վերապատրաստման սկիզբը քննարկել և համաձայնեցնել դրամաշնորհային ծրագրի աշխատակազմի հետ՝ ըստ անհրաժեշտության լրամշակելով:
- Սկզբնական կրթության ֆակուլտետի ընտրված պրոֆեսորադասախոսական համակազմի (առնվազն 10 դասախոս) համար կազմակերպել և անցկացնել Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC ուղղությամբ վերապատրաստում՝ ըստ ծրագրի ժամանակացույցի 3 ամիս ժամանակահատվածում,
- Իրականացնել վերապատրաստման գործընթացում նախատեսված ընթացիկ և ամփոփիչ գնահատումը՝ ապահովելով անհատական պորտֆեյլոների առկայությունը՝ բոլոր վերապատրաստվողների մասով ընդհանուր առմամբ առնվազն 100 նկարներ:

Ակնկալվող արդյունքները

Խորհրդատուն կատարված աշխատանքների առաջին և երկրորդ փուլերի ավարտից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնում է հաշվետվություն:

Ծառայության մատուցման արդյունքում խորհրդատուն պետք է

- հիմնվելով միջազգային առաջատար փորձի վրա՝ նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժության և մեթոդիկայի մասնագիտությունների ոլորտում ներկայացնի մշակված օրինակելի վերապատրաստման մոդուլներ պատկերների ստեղծման(թվայնացման, խմբագրման) համակարգչային գրաֆիկական աշխատանքների վերաբերյալ Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC ծրագրերով, որը

կներառի

  - նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություններին առնչվող պատկերների ստեղծման համակարգչային գրաֆիկայի աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, դրանց կիրառման մեթոդաբանությանը ու վերջինիս ընտրության սկզբունքների ներկայացում,
  - պատկերների պատրաստման, համահունչ ընտրված մեթոդաբանությանը՝ դրանց մոնտաժման մեթոդների ներկայացում,
  - յուրաքանչյուր դասընթացի համար ուսուցման արդի միջոցներ, գրականության ցանկ և այլ տեղեկատվական աղբյուրների ներկայացում և սահմանում, որոնք անդրադառնում են Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC ծրագրերով աշխատանքի կիրառման ժամանակակից մեթոդանբանությանը,
- ուսումնառության վերջնարդյունքների ապահովման համար նախատեսված ընթացիկ և ամփոփիչ գնահատման մշակված ձևեր և մեթոդներ, ամփոփիչ գնահատման արդյունքում ստացված յուրաքանչյուր վերապատրաստվողի անհատական պորտֆեյլոն՝ ընդհանուր առմամբ առնվազն 100 նկարներ:
- Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC ծրագրերի ուղղությամբ իրականացված վերապատրաստումներ և վերապատրաստված առնվազն 10 աշխատակիցներ:

Խորհրդատուի աշխատանքները համակարգում է ՆՄՀ «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի համակարգողը, իսկ հաշվետվությունները հաստատում՝ նույն Ծրագրի ղեկավարը:

Նվազագույն որակավորման պահանջներն են.

Նշված ծառայության իրականացման համար պահանջվում են անհատ խորհրդատուին ներկայացվող հետևյալ նվազագույն որակավորման պահանջներն ու գնահատման չափանիշները.

- Բարձրագույն/մասնագիտական տեխնիկական կրթություն
- առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ համակարգչային պատկերների ստեղծման գործընթացում
- նախադպրոցական, տարրական կրթության և մեթոդիկաների բավարար իմացությունը ցանկալի է,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում, հետազոտական և կրթական միջազգային այլ հաստատություններում կարճատև կամ երկարատև հետազոտության փորձը ցանկալի է,
- Վերապատրաստման/դասընթացների մոդուլների մշակման և վերապատրաստումների/դասընթացների իրականացման փորձ
- կրթական ծրագրերի, մոդուլների, գնահատման ձևերի, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանության մշակման ուղղությամբ փորձառությունը ցանկալի է,

- օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) պարտադիր իմացություն
- Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC և նմանատիպ այլ ծրագրերի գերազանց իմացություն:

Գնահատման չափանիշներ

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Ընտրության հանձնաժողովի կողմից ըստ հետևյալ գնահատման չափանիշների.

Չափանիշը	Առավելագույն միավորը
Որակավորում • Բարձրագույն/մասնագիտական տեխնիկական կրթություն, • Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) պարտադիր իմացություն	30
Ընդհանուր փորձառություն և հմտություններ • Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ համակարգչային պատկերների ստեղծման գործընթացում	30
Հատուկ փորձառություն • Նախադպրոցական, տարրական կրթության և մեթոդիկաների բավարար իմացությունը ցանկալի է, • Վերապատրաստման/դասընթացների մոդուլների մշակման և վերապատրաստումների/դասընթացների իրականացման փորձ • Բարձրագույն ուսումնական հաստատություններում, հետազոտական և կրթական միջազգային այլ հաստատություններում կարճատև կամ երկարատև հետազոտության փորձը ցանկալի է, • Կրթական ծրագրերի, մոդուլների, գնահատման ձևերի, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանության մշակման ուղղությամբ փորձառությունը ցանկալի է, • Adobe Photoshop CC, Adobe Illustrator CC, Adobe InDesign CC և նմանատիպ այլ ծրագրերի գերազանց իմացություն:	40

Դիմող թեկնածուները դիմումին կից (դիմումի ձևը կցվում է) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը, աշխատանքների ցանկը:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Ամբողջ ծրագիրը պետք է իրականացնել 4 ամսվա ընթացքում՝ երկու փուլով:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ հասցեով, կամ էլ. փոստով (davidmeliqsetyan@mail.ru) մինչև ս.թ. հուլիսի 30-ը ժամը 17:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 010-597082 հեռախոսահամարով:

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ
Տիգրան Մեծի 17, 214 սենյակ

Դիմող՝ *(անուն ազգանուն)*
հասցե՝(…… ……..)
հեռախոս՝ (…….)
Էլ. փոստ՝ (……..)

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում **ՀՊՄՀ-ի Նախադպրոցական և Տարրական կրթության և մեթոդիկա մասնագիտությունների կրթական ծրագրերի դասախոսական անձնակազմի՝ ՏՀՏ նկարների թվայնացման, խմբագրման, վեկտորային գրաֆիկայից կարողությունների և էլեկտրոնային (թվային) գրադարանի ստեղծման նպատակով** խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ *(անուն, ազգանուն)*

<<…>> ……..... 2018թ.